

Հայ ժողովրդական բանահյուսություն. Մովսես Խորենացու «Հայոց
Պատմություն» գիրքը՝ որպես պատմական սկզբնաղբյուր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն -----	2
Խորենացու կյանքը և գործունեությունը -----	3-4
Հայոց պատմություն, առանձնահատկությունները, աղբյուրները -----	4-7
Առասպելաբանական հատվածները -----	7-8
Հայկ և Բել -----	9-10
Հայկյան Արամ -----	10
Արա Գեղեցիկ և Շամիրամ -----	11-12
Վահագն վիշապաքաղ -----	12-13
Տիգրան և Աժդահակ -----	12-13
Արտաշես և Արտավազդ -----	13-15
Եզրակացություն -----	15-16
Օգտագործված գրականության ցանկ -----	16-17

Ներածություն

Ժողովրդական բանահյուսությունը հանդիսանում է յուրաքանչյուր ազգի հոգևոր մշակույթի անբաժանելի մասը: Ժողովրդի իմաստուն խոսքը փոխանցվելով դարերից դարեր եկել հասել է մինչև մեր օրեր:

Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է, նրա հավաքական բանականության և հավաքական հույզի արգասիքը: Սկիզբ առնելով անհիշելի ժամանակներից, այն հոսանուտ գետի պես, անընդհատ նորոգվել է, իր մեջ ներառելով ժողովրդի աշխարհընկալումը, դարավոր կենսափորձն ու իմաստությունը:

Բանահյուսությունը՝ հոգևոր մշակույթի այդ կարևորագույն բնագավառը, հաստատագրված բնագրեր չի ճանաչում և փոխանցվում է բերնեբերան:

Բանահյուսության ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը՝ բանագիտությունը, իբրև առանձին գիտություն ձևավորվել է 19-րդ դ. սկզբներին, Գրիմ եղբայրների, հատկապես՝ Յակոբ Գրիմի կողմից:

Ժողովրդական բանահյուսությունը ազգային հոգևոր արժեքի մի մասն է, որը, սերնդեսերունդ փոխանցվելով, բյուրեղացել, հասել է մինչև մեր օրերը՝ ձևավորելով ու ամբողջացնելով այն կրողների ազգային դիմագիծը և հարուստ նյութ հանդիսանալով ինչպես ժամանակակից գեղարվեստական գրականության, այնպես էլ պատմագրության և արվեստի մյուս ճյուղերի զարգացման համար:

Բանահյուսությունը գրավոր գրականությունից տարբերվում է չորս հիմնական տարրերով՝ բանավոր գոյությամբ (բանահյուսական ստեղծագործությունները ապրում են ժողովրդի հիշողության մեջ և փոխանցվում են բանավոր՝ բերնեբերան), հանրային՝ կոլեկտիվ բնույթով (բանահյուսական ստեղծագործության ձևավորմանն ու տարածմանը մասնակցում է ժողովուրդը), տարբերակների առկայությամբ (բանահյուսության ցանկացած տեսակ, ի տարբերություն հեղինակայինի, ունի բազում տարբերակներ. ինչքան՝ ասացող, այնքան՝ տարբերակ) միաձուլությամբ՝ սինկրետիզմով (բանահյուսական մի շարք տեսակներ իրենց մեջ ներառում են տարատեսակ սեռեր ու ժանրեր՝ համադրելով թե՛ թատերականը (դրամատիկական, ողբերգական, կատակերգական, դիմախաղ, մարմնի շարժումներ), թե՛ ազգագրական-ծիսականը (հարսանեկան, թաղման, ազգային տոների ու խաղերի դրսևորումներ), թե՛ երաժշտարվեստի ու պարարվեստի

արտացոլանքները, և թե՛ բանարվեստի զանազան տեսակների
[կիրառությունները](#)):

Հայ հին գրականության պատմությունը և նրա հետ կապված բազմաթիվ հարցեր ուսումնասիրել են մեծ թվով թե՛ հայ, թե՛ եվրոպացի գրականագետներ ու բանասերներ: Եվ դա հասկանալի է. հայ հին գրականությունն ունի համաշխարհային արժեք ու նշանակություն: Հունա-հռոմեական անտիկ շրջանի հռչակավոր պատմագիրներից հետո, վաղ միջնադարում, քրիստոնեական կրոնի տարածման հանգամանքներում՝ հինգերորդ դարի հայ գրականության ու մշակույթի խոշորագույն դեմքերը, մեր դասական պատմիչները իրենց գործերի աշխարհիկ-քաղաքական էությանը և գաղափարական բովանդակությամբ պատմագիտական մտքի ընդհանուր զարգացման մի նոր, բարձր փուլ ներկայացրին :

Կարելի է ասել, որ հայ հին գրականության պատմությունը սկիզբ է առել 5-րդ դարից: 5-րդ դարը հայ ժողովրդի պատմության մեջ մտել է ոսկեդար անվամբ՝ ի նշանավորումն հոգևոր աննախադեպ վերելքի:

Ոսկեդարի հայ ազգային գրականությունն ու մատենագրությունն ունեցան բազմաճյուղ զարգացում: Առաջին հերթին հայ մատենագրությունը փայլեց պատմագրության, փիլիսոփայության, դավանաբանական գրականության մեջ: Այս մատենագրության ծաղկմանը նպաստեց թարգմանական գրականության ավանդույթի հիմնադրումը:

Հայ հեթանոսական շրջանի բանահյուսությունից մեզ հասել են փշրանքներ, և դրանք պահպանված են հիմնականում պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Չնայած հեթանոսական շրջանի մշակույթը Հայաստանում քրիստոնեության մուտքի հրամայական պահանջով ենթարկվեց ոչնչացման, սակայն մնաց բանավոր հիշողությունը, որից և օգտվեցին ոսկեդարի պատմիչներից հատկապես Մովսես Խորենացին, Ագաթանգեղոսը և Փավստոս Բուզանդը:

5-րդ դարի գրականության մեջ ամենանշանակալին հայ պատմագրությունն է, որի կարևորությունը անպայմանորեն դուրս է գալիս ազգային նեղ շրջանակից և գնում դեպի համաշխարհային արժևորում :

5-րդ դարի հայ մատենագիրներից են Կորյուն Վարդապետը, Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Ղազար Փարպեցին և, իհարկե, նշանավորագույնը՝ Մովսես Խորենացին: Այս մեծանուն մատենագիրները համաշխարհային արժեք են ունեցել ոչ միայն ոսկեդարում, այլ մեր օրերում:

Այս բոլոր պատմիչների երկերն ունեն նաև գրական-գեղարվեստական արժանիքներ և նպաստել են հայ գեղարվեստական արձակի սկզբնավորմանը:

5-րդ դարի պատմիչների մեջ Մովսես Խորենացին առանձնանում է իր երկով. Նա գրել է ամբողջական «Հայոց պատմություն», մինչդեռ մյուսները սահմանափակվել են կոնկրետ ժամանակահատվածների միջև:

5-րդ դարի հայ պատմիչների գործերը տարբեր ժամանակներում և բազմիցս թարգմանվել են օտար լեզուներով և արժանացել են ամենատարբեր մեկնաբանությունների :

Հայ գրավոր մշակույթի պատմության մեջ առանձնանում է Մովսես Խորենացու հմայիչ կերպարը: Նրա «Պատմություն Հայոց» աշխատությունը միջնադարում եղել է ազգային ինքնաճանաչման, քաղաքական, հայրենասիրական դաստիարակության ուսումնական ձեռնարկ: Հայ սերունդները միշտ ակնածանքով ու երախտագիտությամբ են հիշել Խորենացուն, մեծարել նրան Պատմահայր, Քերթողահայր, Մեծն Մովսես և այլ պատվանուններով:

Խորենացու կյանքը և գործունեությունը

Խորենացու մասին կենսագրական տեղեկություններ քիչ ունենք: Այս տեղեկությունների մեծ մասը հաղորդում է ինքը՝ հեղինակը Պատմության մեջ: Պատմահոր կենսագրության վերաբերյալ կարճառոտ, բայց կարևոր տեղեկություններ է մեզ հաղորդել նաև Ղազար Փարպեցին: Համաձայն այս տվյալների Մովսես Խորենացին ծնվել է Տարոն գավառի Խորնի (կամ Խորեան) գյուղում: Ըստ Ստ. Մալխասյանցի՝ «Խորենացին պետք է ծնված լիներ 410 թվականի շուրջը, մի քանի տարով առաջ կամ հետո»: Այս թվականը լավ հարմարվում է Խորենացու այն վկայությանը, թե Պատմությունը գրելիս, 480-ական թվականներին, եղել է «այր ծեր և հիւանդոտ և անպարապ ի թարգմանութեանց»:

Համաձայն Կորյունի վկայությունների Խորենացին մանկության տարիներում սկզբնական կրթությունը ստացել է հենց Սյունիքում, Մեսրոպ Մաշտոցի այնտեղ հիմնած դպրոցում: Իր ցուցաբերած աչքի ընկնող ընդունակությունների շնորհիվ 431 թվականին տեղի ունեցած Եփեսոսի համաքրիստոնեական ժողովից հետո Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի ջանքերով մի խումբ երիտասարդ հայ հոգևորականների հետ ուղարկվել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքը՝ ուսման մեջ կատարելագործվելու համար: Այստեղ նա ուսումնասիրել և սովորել է օտար լեզուներ, հատկապես հունարեն, յուրացրել է փիլիսոփայություն, քերթողական արվեստ, երաժշտություն, ճարտասանություն, աստվածաբանություն, դիցաբանություն, պատմություն:

Գիտելիքների մեծ պաշարով զինված՝ հայ ուսանողները նաև են նստել Հունաստանով հայրենիք վերադառնալու համար: Սակայն անբարենպաստ քամիները նրանց առագաստանավը քշել են Իտալիա, և հայ ուսանողները կարճ ժամանակով հանգրվանել են Հռոմում, այցելել Քրիստոսի երկու գլխավոր առաքյալների՝ սուրբ Պողոսի և սուրբ Պետրոսի գերեզմաններ, այնուհետև անցել են Աթենք և Բյուզանդիոնի վրայով վերադարձել հայրենիք: Ալեքսանդրիա մեկնելիս հայ ուսանողները եղել են նաև Եդեսիայում, ծանոթացել նրա գրադարանին: Մովսես Խորենացու ուսումնառության տարիները սերտորեն կապված են 5-րդ դարի քաղաքակիրթ աշխարհի մշակութային կարևոր կենտրոններին, որոնցում նա ուսանել է, զարգացել, ընդլայնել իր աշխարհայացքն ու մտահորիզոնը:

Հայտնի չէ, թե որքան ժամանակ հայ ուսանողները մնացին պանդխտության մեջ, համենայն դեպս ոչ պակաս, քան 5-6 տարի: Նրանք վերադարձան 439 թվականից հետո, երբ Հայաստանի երկու լուսավորիչներն ու նրանց ուսուցիչներն արդեն վախճանված էին: Նրանց համար անակնկալ էր այս ցավալի իրողությունը: Այս առիթով Խորենացին իր վիշտն է արտահայտում «Ողբում»¹ «Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեն իմ ամենիմաստ արվեստով և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շտապ դիմելով հույս ունեինք հարսանիքներում պարել,-այժմ, այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր եմ ասում, ողորմելի հառաչելով. Նույնիսկ չհասա տեսնելու նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնը և օրհնությունը»:

Խորենացու «Ողբից» և հին աղբյուրներում պահպանված ուրիշ տեղեկություններից երևում է, որ ապագա մեծագույն պատմիչը և իր ուսանող ընկերները Հայաստան հասնելով իրենց մահացած ուսուցիչներին փոխարինած եկեղեցական պետերի կողմից ոչ միայն արժանի ընդունելություն չեն գտնում, այլև հալածանքների են ենթարկվում ու ամեն տեսակետից ծանր վիճակի մեջ ընկնում: Ստ. Մալխասյանցի այս առիթով տված բացատրությունների համաձայն Խորենացին Ալեքսանդրիայում հունական կրթություն ստանալով՝ դավանանքով դարձել է քաղկեդոնական և հետևաբար պայքարը մղվում էր հայ հոգևորականության երկու խավերի միջև, որոնցից մեկը ասորական օրիենտացիայի հետևող էր, մյուսը՝ հունականի: Ըստ ավանդության, Խորենացին, խուսափելով այս հալածանքներից, երկար ժամանակ ապրել է ծպտված կյանքով: Մովսես Խորենացին հալածանքներից ազատվել է արդեն ծերացած տարիքում՝ Գյուտ կաթողիկոսի շնորհիվ և նշանակվել է Բագրևանդի եպիսկոպոս:

Խորենացու վախճանվելու թվականը մեզ հայտնի չէ, ստույգ հայտնի չէ նաև նրա գերեզմանի վայրը: Սակայն նրա գերեզմանն ավանդաբար ցույց է տրվում Տարոնի Առաքելոց վանքի մոտակայքում:

Հայոց պատմություն, առանձնահատկությունները, աղբյուրները

Միջնադարյան ձեռագրերը Մովսես Խորենացուն են վերագրում ինքնուրույն և թարգմանական մի շարք երկեր՝ ճառեր, թուղթ, ներբողյան, հոգևոր երգեր (շարականներ), քերականական, փիլիսոփայական աշխատանքներ ու թարգմանություններ: Սակայն, այնուամենայնիվ, նրա մատենագրական վաս-տակի թագն ու պսակը «Պատմություն Հայոց» երկն է: Սա համարվում է Խորենացու գլուխգործոցը, այն, անխոս, անմահացրել է Քերթովահոր անունը և հայ մատենագրության համար մնացել է անմահ հիշատակարան:

«Հայոց Պատմություն»-ը հեղինակը շարադրել է իշխան Սահակ Բագրատունու պատվերով՝ նրա առաջարկությունն արժանացնելով արտակարգ մեծ գովեստի. «Բայց ես չատ եմ զարմանում քո մտքի

¹ Մ.Խորենացի«Ողբը»

ծննդականության վրա, որ մեր (նախա-րարական) ցեղերի հներից սկսած մինչև այժմյանները մենակ գտնվեցիր այսպիսի մեծ խնդրի ձեռնարկելու և մեզ առաջարկեցիր հետազոտություն կատարել: Ուստի ոչ միայն պետք է քեզ գովել, այլև քեզ համար աղոթել, որ միշտ այսպես մնաս» :

Պատմահայրը «Հայոց պատմությունը» գրել է Ալեքսանդրիայից վերադառնալուց մոտ քառասուն տարի հետո, այսինքն՝ մոտավորապես 480 թվականից հետո, քանի որ Մալխասյանցը նշում է, որ պատմիչը ծնվել է մոտավորապես 410 թվականին, 431 թվականին մեկնել է Ալեքսանդրիա և վերադարձել է հայրենիք միայն 5-6 տարի անց:

Խորենացու «Հայոց Պատմությունը» բաղկացած է 3 մասից, որոնք կոչվում են գրքեր և վերջում կցել է «Ողբը» : Առաջին գիրքը բաղկացած է 32 գլխից և կրում է «Հայոց մեծերի ծննդաբանությունը» վերնագիրը: Հիմնականում պանծացնում է հայոց Հայկ, Արամ, Արա Գեղեցիկ նահապետներին, Պարույր Սկայորդի, Երվանդ Սակավակյաց, Տիգրան Մեծ թագավորներին: Այս անձինք աչքի են ընկել իրենց քաջությամբ, ազատասիրական ոգով, երկիրը շենացնելու, հայության վարկը բարձրացնելու առաքելությամբ:

Երկրորդ գիրքը, որ կոչվում է «Միջին պատմություն մեր նախնիների», կազմված է 92 գլխից և ընդգրկում է Հայաստանում Արշակունիների թագավորության շրջանի պատմությունը՝ մինչև Տրդատ Մեծի գահակալությունը, երկրում քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ճանաչումը:

«Մեր հայրենիքի պատմության ավարտը» խորագրով վերջին գիրքը կազմված է 68 գլխից: Այն ընդգրկում է հայ կյանքի փոթորիկներով ու դրամատիկական անցքերով լի մի ժամանակաշրջան, երբ երկրի պաշտպանության ու լիակատար անկախության հասնելու համար բռն զոհվեցին պայքար էր մղվում հարևան երկու հզոր պետությունների՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի դեմ : Այս գրքում արտացոլվում է նաև հայ գրերի գյուտը, Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի վախճանը:

Խորենացու «Հայոց պատմությունն» ավարտվում է հռչակավոր ողբով: Պատմա-հայրը ողբում է հայոց թագավորության վերացումը, ինչպես նաև կաթողիկոսական աթոռը Լուսավորչի տոհմի ժառանգներից վերցնելը: Խորենացին խտացնում է քննադատվածներին սևացնելու գույները այդ միջոցով լսելի լինելու համար: Պատմահոր ողբը հայրենիքին ուղղված սթափ քննադատություն է, հայրենակիցներին ինքնազգաստացման մղելու հզոր մի փորձ («Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերիդ մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանայդ, խորհրդականդ և ուսուցանողդ. Վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը»):

Խորենացու «Հայոց պատմությունը» հինգերորդ դարի հայ քաղաքական-հասարակական մտքի ամբողջ հարստությունն արտացոլող ու նրա ամենաբարձր արտահայտությունը հանդիսացող մի հոյակապ հուշարձան է: Այս գիրքը ոչ միայն հայ գիտական մտքի, այլև գեղարվեստական ճաշակի ու զգացողության ամենացայտուն արտահայտություններից մեկն է, այն հին

ժամանակների հայ պատմագիտական մշակույթի խոշորագույն մարմնավորումն է, հինգերորդ դարի հայ գեղարվեստական խոսքի ու էսթետիկական ըմբռնումների լավագույն արտահայտություններից մեկը:

Մեծ է հորենացու պատմության ճանաչողական և գրական-մշակութային արժեքը: Առանձնապես բարձր են գնահատվում հեթանոսական ժամանակների, այսպես ասած՝ հայոց ազգի նախնական պատմությանը վերաբերող մասերը և մանավանդ հայ հնագույն բանավոր ստեղծագործություններից բառացի ու պատմողաբար կատարած մեջբերումները: Բավական է նշել, որ այս ձևով Քերթողահայրն անդառնալի կորստից փրկել և հետագա սերունդներին է փոխանցել ժողովրդական ստեղծագործության մի շարք բարձրարժեք նմուշներ, որոնք հայ գեղարվեստական խոսքի ամենահին հորինվածքներն են:

Մովսես հորենացու երկն աչքի է ընկնում մի շարք առանձնահատկություններով.

1. Հայ մատենագրության առաջին հուշարձանն է, որն ընդգրկում է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ ազգի կազմավորումից մինչև հեղինակի ապրած ժամանակները:

2. Քերթողահայրն իր աշխատությունը գրելիս, բացի հայ հին բանահյուսական ստեղծագործություններից, օգտագործում է նաև բազմաթիվ ու բազմալեզու գրավոր աղբյուրներ, որոնց մեծ մասը հիշատակում է անուններով:

3. Պատմահոր մատյանը հայ իրականության մեջ քննական պատմություն ստեղծելու առաջին փորձն է:

Այս սկզբունքների հետևողական գործադրման շնորհիվ հորենացու գիրքը ձեռք է բերել ճշմարտապատում սկզբնաղբյուրի նշանակություն:

Հորենացու «Հայոց պատմության» ուսումնասիրման ամենակարևոր և միաժամանակ վիճահարույց ոլորտներից մեկը նրա օգտագործած աղբյուրներն են՝ առնչվող բոլոր տարաբնույթ առեղծվածներով հանդերձ: Բազմաթիվ ճշմարտանման մեկնաբանության սպասող հարցեր կան, որոնք վերաբերում են նրա հաղորդած տեղեկությունների արժանահավատության խնդրին: Աղբյուրագիտական հարցերի լուսաբանումից է, վերջին հաշվով, մեծապես կախված նաև պատմագրի ապրած ժամանակի շուրջը հարյուրամյակից ավելի շարունակվող բանավեճի լուծումը:

«Հայոց պատմության» աղբյուրների հետազոտման կարևորությունն օրինաչափ է, քանի որ հորենացին, հանձն առնելով իր գրքում ընդգրկել Հայաստանի լիակատար պատմությունը՝ սկսած ամենավաղեմի իրադարձություններից, միջնադարյան հայ պատմագիրներից ամենից շատն է կարիք ունեցել անցյալի մասին պատմող արժանահավատ աղբյուրների և բնականաբար կանգնել մեծագույն դժվարությունների առաջ մի երկրում, որտեղ, ինչպես ասում է Ստ. Մալխասյանը «գիրքն ընդհանրապես հազվագյուտ մի բան էր»:

Գիտությունը հորենացու պատմության մեջ տեսնում է շուրջ 40 աղբյուրների օգտագործման փաստեր, որոնց գերակշիռ մասը նշում է հենց ինքը՝ պատմահայրը:

Խորենացին օգտագործել է հայկական, հունական, պարսկական, ասորական, վրացական և այլ ժողովուրդների աղբյուրներ, Նա ջանացել է իր ժամանակի համաշխարհային պատմության մեջ որոշել հայերի իրավական և պատմական տեղը : Խորենացին իր տրամադրության տակ ունեցած աղբյուրներից ամենից բարձր է գնահատում հունականներն ու գերազանցապես օգտվում է դրանցից, իհարկե, դարձյալ ոչ մեքենայաբար, այլ մշտապես հանդես բերելով իր վերաբերմունքը՝ պատմական եղելությունների իսկական բնույթն ու նշանակությունը բացահայտելու ուղղությամբ: Թե ինչու է Նա գերապատվությունը տվել հունական աղբյուրներին, ինքն այդ բացատրում է նրանով, որ ժամանակի ընթացքում հույները թե՛ քաղդեական, թե՛ ասորական ու այլ լեզուներով եղած մատյանները թարգմանել են իրենց լեզվով և օգտագործել, դրա համար էլ Խորենացին ասում է, «ես չեմ տատանվում՝ ամբողջ Հունաստանը գիտության մայր կամ դայակ կոչել»:

Խորենացու հիշած աղբյուրների թվին են պատկանում ս. Գիրքը, Մար-Աբաս Կատինայի պատմությունը, հայ ժողովրդական առասպելները կամ երգերը, Եդեսացի, Ագաթանգեղոս, Յոմերոս, Յերոդոտոս, Պլատոն, որոնցից ստանում է տեղեկություններ, Պոլիկրատես, Արտիթեսոս, Սկամադրոս, Մանեսթոն և այլն:

Նշված աղբյուրներից ամենակարևորները և բանասերներին ավելի զբաղեցնողները եղել են Մար-Աբասի Պատմությունը և հայ ժողովրդական առասպելները:

Բայց և այնպես, երբ խոսվում է Խորենացու գործի գեղարվեստական առանձնահատուկ գծերի մասին, պետք է ասել, որ դրանք, առաջին հերթին պայմանավորված են ժողովրդական առասպելների ու Էպոսի՝ իբրև պատմության աղբյուրի, լայն օգտագործմամբ: Նրա կարծիքով խողովրդական բանահյուսության այդ նմուշներն իրենց մեջ թաքցնում են ճշմարիտ իրողություններ: Նա անհրաժեշտության դեպքում դիմում է ժողովրդական առասպելներին ու Էպոսին, ձգտելով դրանց մեջ «թաքնված ճշմարտությունը» բացահայտել և այն ուրիշ գրավոր աղբյուրների հետ համեմատելով օգտագործել իբրև պատմության նյութ:

Առասպելական հատվածները

Ինչպես հայ ժողովրդի հնագույն պատմության, այնպես էլ կուլտուրայի՝ առանձնապես ժողովրդական բանահյուսության հնագույն հարուստ նմուշների փրկության գործում անգնահատելի են Խորենացու ծառայությունները: Նա ոչ միայն համարյա լիովին գաղափար է տվել հայ հին առասպելների ու Էպոսի բովանդակության հիմնական գծերի մասին, այլև այդ բանահյուսության բավական թվով նմուշներ փրկել է անդամնալի կորստից :

Մեր պատմիչ-գրողները, հիմնալի իմանալով ժողովրդական բանահյուսությունը, սերտորեն կապված էին նրա ավանդների հետ՝ թե՛ իրենց պատմելու արվեստով և թե՛ իրենց լեզվաոճական մտածողությամբ: Նրանց մոտ որոշակի է Նաև պատկերավոր նկարագրություններով ու ճարտասանական

փայլով տպավորություն թողնելու ձգտումը: Նրանք մեծ դեր են կատարել նաև հայ հին գրական լեզվի զարգացման ու հարստացման ուղղությամբ:

Մովսես Խորենացու գրքում՝ որպես պատմական սկզբնաղբյուր, զգալի տեղ է հատկացված հայոց հին բանահյուսության նմուշներին: Դրանք պատմիչը գերազանցապես վերցրել է հեթանոսական այն անգիր գրույցներից, որոնք իր օրոք մարդկանց հիշողության մեջ դեռ պահպանվելիս են եղել: Խորենացու համոզմամբ՝ բանավոր ստեղծագործություններն առասպելներն են, որ իրենց մեջ «այլաբանաբար թաքցրած ունեն ճշմարտությունը»: Հայ հին առասպելներն ու վիպական երգերը, որ պահպանվել են Խորենացու գրքում, առավելապես նվիրված են վաղնջական ժամանակների պատմական դեպքերին ու անձանց: Հին առասպելներից և վիպասանքից վկայակոչված հատվածները, որ երկար դարեր գոյատևել են բանավոր կյանքով, գեղարվեստական շունչ ու ոգի են հաղորդում Պատմահոր շարադրանքին:

Առասպելի՝ նրա գրականագիտական սահմանումն այսօր էլ պահպանում է իր արժեքը և ընդունվում է ներկա չափանիշներով: Առասպելի տեսակին հատուկ է գերագույն չափազանցումը: Խորենացին այս մասին խոսում է, երբ ներկայացնում է Տորք Անգեղի անհավատալի սխրանքը իր հայրենիքը պաշտպանելիս: Պոնտոս ծովի կողմից Հայաստանի վրա են գալիս թշնամու նավեր, Տորքը պոկում է բլրաչափ ժայռեր ու նետում ծովը: Նավերի մի մասը խորտակվում են, իսկ մի մասը հետ են շարտվում ահագին ասպարեզներ: Այս պատմելուց հետո Պատմահայրը չի մոռանում հիշեցնել, թե դեպի նկարագրությունը առասպելի կանոնների համաձայն չափազանցված է:

Առասպելի գլխավոր հերոսները սովորական մարդիկ չեն, նրանք գերմարդիկ են: Դա հենց երևում է Տորքի կերպարում: Այս մարդիկ կիսաստվածներ են:

Առասպելը վաղնջական ժամանակների պատմության չափազանցված, դիցաբանական երանգ ստացած էպիկական պատումն է:

Մի շարք առասպելների հիմքում սկզբնապես ընկած են եղել տվյալ ցեղի, խողովրդի կյանքում տեղի ունեցած իրական դեպքերն ու հերոսները: Սակայն բնության դեմ մղած պայքարում դեռևս անգն մարդն իր դիցաբանական մտածողությամբ երևույթները բացատրել է որպես աստվածների և ոգիների գերբնական ուժի արդյունք:

Մովսես Խորենացու պատմության առասպելական և վիպասանական հատվածներն են՝ «Հայկ և Բել»², «Հայկյան Արամ»³, «Տիգրան և Աժդահակ»⁴, «Վահագն վիշապաքաղ», «Արտաշես և Արտավազդ»:

Երբ ժողովրդական բանահյուսության առնչությամբ խոսվում է Խորենացու «Հայոց պատմության» գրական-գեղարվեստական խոշոր արժանիքների մասին, ապա անհրաժեշտ է հատկապես նշել, որ մեծ պատմիչ-գրողը բնավ էլ չի եղել իր օգտագործած բանահյուսության գործերի բուն բովանդակության անտարբեր շարադրողը: Ինչպես նկատել է Մ. Աբեղյանը, նա շատ դեպքերում իր սեփական ստեղծագործական կնիքն է դնում դրանց վրա՝ որոշակի գրական մշակման ենթարկելով: Այնպես որ Պատմության մեջ, մանավանդ առաջին

² «Հայկ և Բել»

³

⁴

գրքում, օգտագործված բանահյուսության թեմաներն ու սյուժեները իրենց գեղեցկությամբ ժողովրդական հանճարի արդյունք լինելով հանդերձ՝ մեզ հասած տեսքով կրում են նաև խորենացու գրական բարձր և նուրբ ճաշակի դրական ներգործությունը:

Հայկ և Բել

Այս առասպելը⁵ պատմական ժամանակով ամենանախնականն է հայ ժողովրդի առասպելների մեջ, որի հիմքը հայկական ցեղերի միավորման և հայ ժողովրդի կազմավորման պատմական իրողությունն է: Ի դեմս Հայկի՝ առասպելում արտացոլվում է իր անկախության համար Ասորեստանի դեմ հայկական ցեղերի մղած տևական կռիվները: Խորենացու ներկայացմամբ՝ Հայկը արտաքին ու ներքին բազում բարեմասնություններով օժտված քաջ ու առաքինի անհատականություն է:

Ահեղ ու երևելի առաջին աստվածներից սերում է հսկաների սերունդը: Այդ հսկաներից էր Հայկը: «Այս Հայկը, ասում է, վայելչակազմ էր, թիկնավետ, խիստ զանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ, դիմադրող այն բոլորին, որոնք ձեռք էին բարձրացնում բոլոր հսկաների և դյուցազունների վրա տիրապետելու»: Հայկին Քերթողահայրն անվանում է «ուշիմ հսկա»: Նա ժողովրդասեր է և հանուն իր հարազատների խիզախորեն ելնում է Բելի դեմ: Հայկի եռությունը բնութագրում են այն խոսքերը, որով նա դիմում է իր փոքրաթիվ զորքին՝ Բելի դեմ ճակատամարտից առաջ. «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խումն բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք, և մեր ազգը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի, և մենք հաղթություն տանենք»:

Ի հակադրություն Հայկի՝ Բելը որակվում է որպես «անճոռնի տիտանյան», վախկոտ է և բռնակալ, ռազմի դաշտում նա կանգնում է իր ընտիր զորականներով շրջապատված: Երբ Բելին հաջողվում է բռնությամբ երկիրն իրեն ենթարկել, Հայկն ըմբոստանում է և իր ողջ գերդաստանով ու ծառաներով թողնում է Բաբելոնը, գալիս է հյուսիս, բնակվում Արարադի երկրում: Սակայն Բելն ամեն կերպ ուզում է իր կողքին ունենալ Հայկի նման քաջ մարդու աջակցությունը և պատգամավորների միջոցով հաշտություն է առաջարկում, բայց ազատատենչ Հայկը մերժում է բռնակալին: Բելը սա չի հանդուրժում և մեծ զորք է հավաքում ու հարձակվում Հայկի վրա: Հայկը չի երկնջում Բելի ընտիր սպառազինված զորքից, շտապ իր շուրջն է համախմբում որդիներին, թոռներին, ուրիշ աղեղնավոր մարդկանց, գնում թշնամուն ընդառաջ: Հայկն իր անձնական օրինակով քաջալերում է իր սակավաթիվ զինակիցներին, մինչդեռ

⁵ [Խորենացի «Յ.Պ.», Ժ.ԺԱ. ԺԲ-«Հայկ և Բել»](#)

Բելը, որ զինված էր այն ժամանակվա համեմատ («նա կրում էր երկաթե գլխանոց, թիկունքի և լանջի վրա՝ պղնձե տախտակներ, սրունքների և թևերի վրա՝ պահպանակներ, մեջքը կապել էր գոտի, որի ձախ կողմից կախված էր երկսայրի սուր, աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակը, իսկ ձախում՝ վահան»), իրեն շրջապատել էր ընտիր զորականներով և աշխատում էր մարտը շահել նրանց միջոցով:

Սկսվում է մի զարհուրելի ճակատամարտ, երկու կողմից տապալվում են բազմաթիվ քաջեր, իսկ ճակատամարտի ելքը մնում է անլուծելի: Այս տեսնելով սարսափում է Բելը և սկսում է բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր: Մտածում էր ամրանալ բազմության մեջ մինչև ամբողջ զորքը տեղ հասներ: Հայկը, կռահելով նրա մտադրությունը, առաջ է նետվում, մոտենում է նրան, մինչև վերջ ձգում է իր լայնալիճ աղեղը և երեքթևյան նետը խրում է Բելի կրծքի մեջ՝ նրան շեշտակի գետնին տապալելով: Նետն անցնում է Բելի մարմնով, թիկունքի կողմից դուրս գալիս և խրվում է հողի մեջ: Բելը տապալվում է և շունչը փչում:

Բազմությունը, այս տեսնելով, դիմում է փախուստի՝ ամեն մեկը իր երեսը դարձրած կողմը:

«Բայց Բելի դիակը, ասում է (Մար Աբաս), դեղերով զմռսելով՝ Հայկը հրամայում է տանել Հարք և թաղել մի բարձրավանդակ տեղում ի տես իր կանանց և որդիների: Իսկ մեր աշխարհը մեր նախնի Հայկի անունով կոչվում է Հայք»:

Հայկական Արամ

«Հայկյան Արամ» առասպելը բաղկացած է մի քանի հատվածից: Նրանում պատմվում է հայ ժողովրդի երկրորդ անվանադրի՝ Արամի քաջագործությունների մասին. «Արամի մասին պատմում են, թե շատ քաջ գործեր է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, որի անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր աշխարհը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները Արմենիկ»:

Արամը պատերազմում է արևելցիների դեմ և հաղթում է իր գլխավոր թշնամուն՝ Նյուբար Մադեսին: Առասպելում պատկերված է Արամի⁶ Էությունը, «Սա աշխատասեր ու հայրենասեր մարդ լինելով, ինչպես ցույց է տալիս նույն պայմանագիրը, լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարացեղ ազգերը ոտնակոխ են անում հայրենիքի սահմանները, և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»:

Արամի թշնամիներից էին Ասորեստանից Բարշամը, Նինոսը և Հայաստանի արևմտյան կողմից տիտանյան Պայապիս Քասոյանը: Արամը գրավում է իր թշնամիների երկրներից որոշ տարածքներ, նույնիսկ այդտեղ բնակվողներին հրամայում է սովորել և խոսել հայերեն: Արամն ամենից շատ ատում էր

⁶ [Մ.Խորենացի«Հայկյան Արամ».ժԷ](#)

Նյութար Մադեսին: Վերջինս քուշանների նման ասպատակելով ձիերի սմբակներով ոտնակոխ է անում Հայաստանի սահմանները և երկու տարի երկիրը մնում է նրա տիրապետության տակ: Արամը, որն ազատատենչ ու հայրենասեր մի անձ էր, դաժանորեն պատժում է իր երկիրը գրաված թշնամուն. Նրան բռնում է, բերում Արմավիր, հրամայում վարսել պարսպի աշտարակին՝ ցից խփելով ճակատին:

Չնայած նրան, որ սա չափազանց դաժան արարք էր, որ թույլ էր տրված Արամի կողմից, այնուամենայնիվ սա մեծ հայրենասերի ձեռքի գործ էր, ով սիրում էր իր հայրենիքը, իր ժողովրդին և հանուն նրա պատրաստ էր ամեն բանի:

Ինչպես արդեն նշեցինք, հարևան ազգերը մեր պետությունը մինչև այժմ էլ անվանում են Հայկյան Արամի անունով. «Սա այսպես հզոր և անվանի դառնալով՝ նրա անունով մինչև այսօր մեր աշխարհն անվանում են մեր շրջակա ազգերը, ինչպես ամենքին հայտնի է»:
Արա Գեղեցիկ և Շամիրամ

«Արա Գեղեցիկ և Շամիրամ»⁷ առասպելն ունի անկրկնելի հմայք: Նրանում խիստ հակադրման մեթոդով կերտվել են Հայաստանի թագավոր Արա Գեղեցիկի և Ասորեստանի տիրուհի Շամիրամի կերպարները: Արան ոչ միայն գեղեցիկ է, այլև խոհեմ է ու խիզախ, նա չի դավաճանում հայրենիքին և չի անտեսում բարոյական պարտադիր չափանիշները: Արային չեն գայթակղում Ասորեստանի հզոր տիրուհու՝ Շամիրամի առաջարկները: Հենց սա էլ դառնում է Արայի մահվան պատճառը: Շամիրամը չի ցանկանում լինել մերժված, մեծ զորք է հավաքում ու հարձակվում Արայի վրա՝ նախապես հրահանգ տալով իր զինվորներին, որ Արային ոչ մի դեպքում չվնասեն: Արան, սակայն, զոհվում է ճակատամարտում, և Շամիրամի ջանքերն իզուր էին նրան արալեզների միջոցով վերակենդանացնելու: Հայ ժողովրդի ցասումն իջեցնելու համար նա Արայի զգեստները հագցնել է տալիս իր հոմանիշներից մեկին և հայտարարում, թե իբր աստվածների զորութունը կենդանա-ցրեց նրան: Նման հայ-տարարությունը վերջ է դնում հայերի ըմ-բոստացմանը, և Շամիրամը հաստատվում է Հայաստանում, ուր կառուցում է ամառանոցներ՝ շատ հավանելով երկրի թարմ, լեռնային օդը: Պատմահայրը ներկայացնում է նրա շինարարական աշխատանքները՝ գեղեցիկ ու ընտիր փո-ղոցների կառուցում, չքնաղ և զարմանալի բաղնիքներ, ոռոգման ցանց, որպեսզի գետը հոգա ամեն տեսակ պիտույքներ, ոռոգի բուրաստաններն ու ծաղկանոցները: Կառուցում է նաև իր ամրոցը քարաժայռի բարձունքի վրա և քարերի վրա թողնում է բազում արձանագրություններ:

Սակայն երբ Շամիրամի որդիները չափահաս դարձան, հանդիմանեցին նրան «իր սաստիկ վավաշոտ և անառակ վարքի պատճառով»: Այս պատճառով էլ Շամիրամը կոտորեց իր որդիներին, ազատվեց միայն ամենափոքրը՝ Նինվասը: Այնուհետև Շամիրամը Չրադաշտից փախուստ տվեց և դիմեց Հայաստան: Սակայն այստեղ էլ սպանվեց իր Նինվաս որդու ձեռքով:

⁷ «Արա Գեղեցիկ և Շամիրամ», ԺՀ, ԺԹ, էջ 92

Մինչև հիմա էլ Վան քաղաքում պահպանվում են Շամիրամի կառուցած բերդի մնացորդները, որոնք վկայում են առասպելի պատմականությունը:

«Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելում Արան պատկերված է որպես Շամիրամի հակառակորդ, որը, սակայն, անձնագոհությամբ և հայրենասիրությամբ դառնում է նահատակ: Շամիրամի և Արայի կերպարները ներշնչել են հայ գրողներին և արվեստագետներին: Նրանց ազդեցությամբ ստեղծվել են գլուխգործոցներ: Հայ անվանի նկարիչ Վազգեն Սուրենյանցը պատկերել է մի տպավորիչ կտավ, որը կոչվում է «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ»: Իսկ նշանավոր գրող Նաիրի Չարյանը գրել է «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը, որի մեջ պահպանված են Մովսես Խորենացու առասպելի հիմնական գաղափարները:

Վահագն վիշապաբաղ

«Վիպանքի» այն բոլոր բառացի հատվածները, որոնք պահպանվել են Խորենացու «Հայոց պատմության» մեջ մարդու՝ գեղեցիկի զգացողության հրաշք-արտահայտություններ են, նրբագեղ ու ինքնատիպ բանաստեղծական պատկերների մի հարուստ աշխարհ, որը հայ ժողովրդի հոգեկան հարստությունների և ստեղծագործական ուժեղ երևակայության փայլուն ապացույց է:

«Վահագնի» առասպելը⁸ պատմահայրը լսել է Գողթան երգիչներից, որոնք փանդիռների նվագակցությամբ փառաբանում էին Վահագնի սխրանքները: Սակայն մինչև առասպելը սկսելը, պատմահայրն իր ընթերցողներին հիշեցնում է, թե պատմական հիշողությունն առասպելներում հենվում է պատմական անձի կատարած գործի վրա: Տիգրան Երվանդյանի որդիներից մեկին պատմահայրը համարում է Վահագնին, որի մասին Հայաստանի առասպելները պատմում են հետևյալը.

Երկներ երկին,
Երկներ երկիր,
Երկներ և ծովն ծիրանի:

Երկն ի ծովուն ուներ և զկարմրիկն եղեգնիկ՝
Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող բոց ելաներ,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ:

Նա հուր հեր ուներ,
Ապա թե
Բոց ուներ մորուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

⁸ [Վահագն Վիշապաբաղ, ԼԱ, Էջ111](#)

Մ. Խորենացին վկայում է, թե այս վիպական հատվածը լսել է իր ականջով: Գողթան գինեվետ գավառի երգիչները Վահագնի քաջագործություններն էին պատմում, ասում էին, թե ինչպես կռվել ու հաղթել է վիշապներին:

«Մենք մեր ականջով լսեցինք, ինչպես այս ոմանք երգում էին փանդիռներով: Դրանից հետո երգում, ասում էին, թե կռվել է վիշապների հետ ու հաղթել, և Զերակլեսի քաջագործություններին շատ նման բաներ էին երգում նրա մասին»:

Տիգրան և Ածդահակ

Այս առասպելական վիպասքը սկսվում է «անցնենք այսուհետև գրելու Տիգրանի և Նրա գործերի մասին: Որովհետև սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ» տողերով: Սա ներքոլ է՝ նվիրված Տիգրան Երվանդյանին: Խորենացին ներկայացնում է, թե ինչպիսին պետք է լինի թագավորը, որպեսզի երկիրն ապրի խաղաղ ու բարգավաճ, և մեր ազգի մեծերի մեջ որպես ուղեցույց առանձնացնում է երեքին. «Ուստի ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել-Յայկ, Արամ, Տիգրան, որովհետև քաջերի սերունդները քաջեր են, իսկ նրանց միջև եղածներինը, ով ինչպես ուզում է՝ թող կոչի»:

Խորենացին հաճույքով է հիշում Տիգրան Երվանդյանի գործերը, որոնց շնորհիվ Յայաստանն ապրում էր լիության ու խաղաղության մեջ:

Յայոց արքա Տիգրանի նկատմամբ դավեր է նյութում Մարաստանի թագավոր Ածդահակը, որն աստղագետների մեկնությամբ ուզում է իմանալ իր տեսած անսովոր երազի իմաստը: Նրան ասում են, թե վիշապին հեծած դյուցազունը, որը երազում հարձակվել է Ածդահակի վրա, եղել է Տիգրանը: Ածդահակը դիմում է խորամանկության՝ Տիգրանի քրոջը՝ Տիգրանուհուն, վերցնում է իրեն կին և կեղծ բարեկամություն ստեղծելով կամենում է վնասել Տիգրանին:

«Տիգրան և Ածդահակ» վիպասքային զրույցում⁹ պատկերված է անձնագոհ հայուհու կերպար՝ հանձին Տիգրանուհու: «Խորագետ» գեղեցկուհին, ինչպես նրան անվանում է պատմահայրը, կռահում է Ածդահակի պատրաստած դավադրությունը և ծածուկ այդ մասին տեղեկացնում է եղբորը:

Ածդահակը բարեկամական տեսակցության պատրվակով Տիգրանին հրավիրում է երկու երկրների սահմանը, սակայն Տիգրանը պատվիրակների միջոցով հայտնում է, որ ինքը տեղյակ է Ածդահակի նենգ նպատակներին: Բախումը դառնում է անխուսափելի: Քաջամարտիկ նիզակավոր Տիգրանը այնպես է հարվածում Ածդահակին, որ նրա թոքի կեսն էլ գեղքի հետ դուրս է բերում:

Վիպասքն ավարտվում է Ածդահակի մահով և Տիգրանի քաջության փառաբանումով. «Բայց գովում եմ իմ քաջամարտիկ նիզակավորին, որ բոլոր անդամներով համաչափ էր, մեկը մյուսին ամեն կերպ պատշաճեցրած, կատարյալ գեղեցիկ հասակով, առույգ և ուժի կողմից հավասարը չունեցող» :

⁹ [Տիգրան և Ածդահակ.Ի. ԻԼ. ԻԹ. Էջ 98](#)

Ի դեպ՝ «Տիգրան և Ամդահակ» վիպասքում որոշակի է Ամդահակի և Բելի բնութագրերի նմանությունը, քանզի բոլոր բռնակալներն ունեն ընդհանրություններ:

Արտաշես և Արտավազդ

Վիպասքին անդրադառնալուց առաջ պատմահայրը հիշեցնում է իր մեկենասին՝ Սահակ Բագրատունուն, թե Արտաշես թագավորի գործերից շատ բան հայտնի է նրան՝ ըստ Գողթնում տարածված պատմությունների, սակայն ինքը, վերաշարադրելով վիպասքի հատվածները, կաշխատի մեկնել նրանցում եղած այլաբանությունները : Ալանները կողոպուտի նպատակով ներխուժել են Հայաստան: Հայոց Արտաշես արքան դուրս է եկել նրանց դեմ պատերազմի: Ալանները փոքր-ինչ հետ են քաշվել և անցել Կուր գետի մյուս ափը: Արտաշեսը կռվի ժամանակ գերել է ալանների արքայազնին և նրանց թագավորը ստիպված հաշտություն է խնդրել՝ խոստանալով այլևս չասպատակել Հայոց աշխարհը: Սակայն Արտաշեսը մերժել է նրան: Ալանների չքնաղ արքայադուստր Սաթենիկը եղբորը փրկելու համար եկել է Քուռ գետի ափը և ձայն տվել հանդիպակաց ափին գտնվող Արտաշեսին.

Քե՛զ եմ ասում, քա՛ջ այր Արտաշես,
Որ հաղթեցիր քաջ ազգին ալանաց,
Եկ լսիր ալանների գեղաշյա դստեր
խոսքը՝

Տո՛ւր պատանուն,
Քանզի սոսկ քենի համար օրենք չէ,
որ դյուցազունները
Այլ դյուցազունների զավակներին
գրկեն կյանքից
Կամ ծառա դարձնելով՝ ստրուկների
կարգում պահեն
Եվ հավերժ թշնամություն
Երկու քաջ ազգերի մեջ հաստատեն:

Արտաշեսը,¹⁰ լսելով այդպիսի իմաստուն խոսքեր և տեսնելով գեղեցիկ արքայադստերը, սիրահարվում է նրան: Նա անմիջապես իր դայակ Սմբատ Բագրատունուն ուղարկում է այլաների թագավորի մոտ՝ խնդրելու Սաթենիկի

¹⁰ [Առտաշեն և Առտավազո, Ճ.Էջ 105](#)

ձեռքը՝ խոստանալով հաշտություն կնքել և նրա գերված որդուն վերադարձնել:
Ալանաց թագավորը, ըստ իրենց սովորության, գլխագին է պահանջում դստեր
համար, որի պատճառով Արտաշեսը որոշում է փախցնել Սաթենիկին:

Յեծավ արի արքա Արտաշեսը
գեղեցիկ Սևուկ նժույգը
Եվ հանեց ոսկեղ շիկափոկ պարանը
Եվ որպես սրաթև արծիվ
անցկացավ գետը
Եվ նետեց ոսկեղ շիկափոկ պարանը,
Գցեց մեջքը ալանաց օրիորդի
Եվ շատ ցավեցրեց մեջքը փափուկ
օրիորդի՝

Արագ հասցնելով նրան իր բանակը:

Գողթան երգիչները առասպելաբանելով նկարագրում են Արտաշեսի և
Սաթենիկի շքեղաշուք հարսանիքը:

Տեղ ոսկի տեղայր
Ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ
Ի հարսնութեանն Սաթինկանն :

Արտաշեսի և Սաթենիկի ամուսնությունից ծնվում է Արտավազդը, որին
մանուկ հասակում իբր փոխում են վիշապագուհիները և փոխարենը մանկան
օրորոցում դն են դնում: Պատմահայրը կրկին վկայակոչում է Գողթնի
երգիչներին, որոնք առասպելաբանում էին, թե Արտաշեսի մահվան ժամանակ,
հեթանոսների սովորության համաձայն, մարդկանց կոտորածներ են լինում,
որից Արտավազդը սրտնեղում է, դիմում հորն ու ասում:

Մինչ դու գնացեր,
Եւ գերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես ավերակացս ու՞մ թագավորեմ :

Սրա համար Արտաշեսը նրան անիծելով այսպես է ասում:

Եթե դու յորս հեծցիս
յԱզատն ի վեր ի Մասիս,
Չքեզ կալցին քաջք,
Տարցին յԱզատն ի վեր ի Մասիս,
Անդ կայցես, և զլոյս մի՛ տեսցես :

Յոր անեծքը կատարվում է. Արտավազը բռնվում է քաջքերի կողմից և բանտարկվում քարանձավում: Երկու շներ կրծում են նրա շղթաները, նա ջանում է դուրս գալ և վերջ տալ աշխարհին, սակայն դարբինների կռահաիրությունից շղթաներն ամրանում են: Այս ամենը, սակայն, պատմահայրը համարում է պառավների գրույցներ. Իրականում Արտավազը որսի գնալիս ընկել է մի խոր փոսի մեջ և անհետացել:

Եզրակացություն

V դ. սկզբնավորվում և ծաղկում է ապրում հայ պատմագրությունը: Պատմահայր Մովսես Խորենացին առանձնանում է V դ. հայ պատմագիրների շարքում: Սահակ Բագրատունու մեկենասությամբ գրված նրա «Պատմություն Հայոց»-ը մի զարմանահրաշ երկասիրություն է, որն ընդգրկում է հայոց պատմությունը՝ սկսած մեր ժողովրդի ծագումից մինչև V դ. կեսերը: Հայոց Պատմահայրն ի մի է բերել և սերունդների թողել հայ ժողովրդի առաջին ամբողջական պատմությունը, որը նա բաժանել է երեք գրքի: Առաջին գրքում պատմվում է Հայկ Նահապետի և նրան հաջորդած սերունդների կատարած գործերի մասին: Երկրորդ գրքում հանդես են գալիս հայոց մեծ բարեփոխիչներ Վաղարշակ և Արտաշես թագավորները, տրվում է մի շարք այլ թագավորների գործունեությունը: Երրորդ գրքը, որ նվիրված է Հայաստանի IV-V դդ. պատմությանը, ավարտվում է «Ողբ»-ով, որտեղ հեղինակը սգում է Հայոց թագավորության անկումը և քննադատում հայ հասարակության հոռի կողմերը: Մովսես Խորենացին ճշգրիտ ժամանակագրության կողմնակից է և այդ կապակցությամբ գրում է. «Չկա հավաստի պատմություն առանց ժամանակագրության»: Պատմահայրն օգտվել է ոչ միայն նախորդ հայ հեղինակների գործերից, այլև օտար հեղինակների երկասիրություններից, ինչպես նաև «Աստվածաշնչից»: Նրա երկը մեզ է հասցրել ժողովրդական բանահյուսության շատ նմուշներ՝ Հայկի և Բելի պատմությունը, Արայի և Շամիրամի ավանդագրույցը, Վահագնի ծննդյան երգը, Արտաշես արքային ձուլված երգերը և այլն: Ի տարբերություն իրեն նախորդած կամ հաջորդած շատ հեղինակների, նա աշխատել է իր օգտագործած նյութերի պատմական մասերը զատել առասպելականից: Պատմահայրը հայ ժողովրդի պատմությունը գրել է հարևան ժողովուրդների պատմության ընդհանուր հենքի վրա և այդ պատճառով նրա երկը հարուստ նյութ է պարունակում նաև Վիրքի, Աղվանքի, Պարսկաստանի, Ասորիքի և անգամ առավել հեռավոր աշխարհների մասին՝ Իռլանդիայից մինչև Չինաստան: Այդ հատկապես արտացոլվել է նրա հեղինակած «Աշխարհացույց»-ում: Մովսես Խորենացին հակիրճ և հստակ բնութագրել է հայ ժողովրդին. «Թեպետ մենք փոքր ածու (փոքրաքանակ ժողովուրդ) ենք և թվով քիչ, և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր երկրում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել...»: Ուշագրավ է նաև Պատմահոր՝ հայ ժողովրդին տված գնահատականը, երբ

դիմում է Սահակ Բագրատունուն. «... դու պատկանում ես նախնական և քաջ ազգի, արդյունավոր ոչ միայն խոսքի և պիտանի խոհականության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ փառավոր գործերով...»:

Մովսես Խորենացու գրքում՝ որպես պատմական սկզբնաղբյուր, զգալի տեղ է հատկացված հայոց հին բանահյուսության նմուշներին: Դրանք պատմիչը գերազանցապես վերցրել է հեթանոսական այն անգիր գրույցներից, որոնք իր օրոք մարդկանց հիշողության մեջ դեռ պահպանվելիս են եղել:

Հայ հին առասպելներն ու վիպական երգերը, որ պահպանվել են Խորենացու գրքում, առավելապես նվիրված են վաղնջական ժամանակների պատմական դեպքերին ու անձանց: Հին առասպելներից և վիպասանքից վկայակոչված հատվածները, որ երկար դարեր գոյատևել են բանավոր կյանքով, գեղարվեստական շունչ ու ոգի են հաղորդում Պատմահոր շարադրանքին:

Մի շարք առասպելների հիմքում սկզբնապես ընկած են եղել տվյալ ցեղի, խողովրդի կյանքում տեղի ունեցած իրական դեպքերն ու հերոսները: Սակայն բնության դեմ մղած պայքարում դեռևս անզեն մարդն իր դիցաբանական մտածողությամբ երևույթները բացատրել է որպես աստվածների և ոգիների գերբնական ուժի արդյունք:

Մովսես Խորենացու պատմության առասպելական և վիպասանական հատվածներն են՝ «Հայկ և Բել», «Հայկյան Արամ», «Տիգրան և Աժդահակ», «Վահագն վիշապաքաղ», «Արտաշես և Արտավազդ»:

Նշենք, որ Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց»-ը ամբողջ միջնադարում ծառայել է որպես դասագիրք, որով հայրենասիրական ոգով դաստիարակվել են հայ ժողովրդի տասնյակ սերունդներ: Նա անվանվել է «Մեծն Քերթող», «Քերթողահայր», այսինքն մեծ իմաստուն և բանաստեղծ: Պատմահոր անունը հայտնի է ամբողջ աշխարհին, իսկ նրա գործը թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով:

13. Օգտագործված գրականություն

- 1.Ա. Դյուլխանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008
- 2.Ժամկոչյան, Պիվազյան, Աղայան, Հայ մշակույթի նշանավոր գործիչներ (5-18-րդ դդ) ԵՊՀ հրատարակչություն
- 3.Մ. Աբեղյան, Երկեր Ա, Երևան, 1966
- 4.[Մովսես Խորենացի. Երևան, 1981](#)
- 5.[Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Երևան, 1997](#)
- 6.Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելներ, Երևան, 1958